

սեղն եւ մեր մի բնութիւն ասեղն՝ երկոքեան ի մի տեսութիւնս ունի»:

Դժբախտաբար այս հետաքրքրական թուղթին ամբողջին վրայ գաղափար չունինք, միայն մի քանի հատուածները պահտւած ըլլալով Կղէմէս Գալանոսէն (Միաբանութիւն Հայոց Ս. Եկեղեցւոյն ընդ մեծի Ս. Եկեղեցւոյն Հոռովմայ. 1658 թ. հտ. 1 էջ 77-78. 101. 430 հայլն. կամ ՀԱ. 1935 էջ 495. 498-499): Նոյն թուականներուն Գրիգոր Կեսարացի ինքզինքին իրաւունք տուած է գրելու նաեւ Էջմիածնայ միաբաններուն թուղթ մը որուն օրինակը Հայր Ներսէս վրդ. Ակինեան առաջին անգամ հրատարակութեան տուած է Էջմիածնայ թ. 1771 ձեռագիրէն ընդօրինակելով:

Այս գրուածքը նոյնութեամբ մէջ կը բերեմ ոչ միայն գաղափար մը տալու համար Գրիգոր Կեսարացիի նախանձաւորութեան, այլ նաեւ իր հմտութեան Ս. Գրոց: Ահա այդ գիրը.

«Իմացե՛ք որ հեմարիս հովիւքն որքան էին յաշխարհի, զանիմասսն եւ զսգեսսն ուսուցանէին. ընդ անկարգիցն կազէին. ընդ փառասարիցն եւ ընդ գողոցն մրցեալ հալածէին. եւ այնու ոչ շատացեալ, այլ հեմարսութիւն գրով արձանացուցեալ. զի զկնի իւրեանց մի խանգարեալ բան հեմարսութեան սու-